# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## N ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-57-ԱՐԱԳԱԾՈՏՆ/2022/ՇԻՆ/2
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան**

**« 18 » « Հոկտեմբեր » 2022թ.**

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տարոն-ԳԳ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գևորգ Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով 07.10.2022թ.-ին կնքված **ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-57-ԱՐԱԳԱԾՈՏՆ/2022/ՇԻՆ/2** ծածկագրով գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 և 7.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-57-ԱՐԱԳԱԾՈՏՆ/2022/ՇԻՆ/2** ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետով սահմանված **8 754 000 (ութ միլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար)** ՀՀ դրամը, որը Պատվիրատուի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է ( 2 ) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ոստիկանությունը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**Աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011021947**
**ՀՎՀՀ 01533334**
**հեռ. 010 59-68-57**
**Էլ. Փոստ:policetv.gnumner@mail.ru**

**Վ. Մովսիսյան**
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն) Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
**«Տարոն-ԳԳ» ՍՊԸ**
**Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ,**
**գ. Ն. Բազմաբերդ 15փ, 62**
**Հեռ.՝ 093-640-448**
**էլ. փոստ՝ taron.Baghramyan77@mail.ru**
**ԱկբաԿրեդիտԱգրիկոլ Բանկ**
**Հ/հ՝ 220173331251000**
**ՀՎՀՀ 05028219**

**Տնօրեն՝**
---------------- **Գ. Գևորգյան**
**(ստորագրություն)**
**Կ.Տ.**

Հավելված N 1
« 18 » «Հոկտեմբեր» 2022թ.
ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-57-ԱՐԱԳԱԾՈՏՆ/2022/ՇԻՆ/2 ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագրի

## Վճարման ժամանակացույց

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | աշխատանք | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45461100/570 | Արագածոտնի մարզում գործող ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի ՈԲ վարչական շենքի 1-ին հարկի ընթացիկ շին-վերանորոգման և պահպանման աշխատանքներ | - | - | - | - | - | - | - | - | - | 8 754 000 | 8 754 000 | 8 754 000 | **8 754 000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011021947
ՀՎՀՀ 01533334
հեռ. 010 59-68-57
Էլ. Փոստ:policetv.gnumner@mail.ru

Վ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն) Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Տարոն-ԳԳ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ,
գ. Ն. Բազմաբերդ 15փ, 6շ
Հեռ.՝ 093-640-448
էլ. փոստ՝ taron.Baghramyan77@mail.ru
ԱկբաԿրեդիտԱգրիկոլ Բանկ
Հ/հ՝ 220173331251000
ՀՎՀՀ 05028219
Տնօրեն՝

Գ. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.